42

Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի տնօրեն,
իրավաբանական գիտությունների թեկնածու
_____ Լ.Ա. Ղազանչյանին
«13» _____ 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Հռիփսիմե Միերի Խաչատրյանի

«Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է անչափահասների խմբային հանցավորության հասկացության, վիճակի, շարժընթացի, կառուցվածքի, անչափահասների հանցավոր խմբերի տիպերի, խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի կրիմինալոգիական բնութագրի, անչափահասների խմբային հանցավորությանը նպաստող գործոնների, անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր և հատուկ կանխարգելման հնարավորությունների ու միջոցների ուսումնասիրությանը:

Ատենախոսը փորձ է կատարել մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը, ըստ էության, կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հանրապետությունում առաջին համապարփակ հետազոտությունը:

Հայցորդի ատենախոսության առարկան անչափահասների խմբային հանցավորության կրիմինալոգիական բնութագիրն է, անչափահասների հանցավոր խմբերի տիպերը, խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի բնութագրիչ առանձնահատկությունները, անչափահասների խմբային հանցավորության պատճառներն ու պայմանները, կանխարգելման հնարավորությունները, միջոցներն ու ձևերը:

Ընտրված հետազոտության թեմայի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ հանցավորությանը հակազդելու քաղաքականության առաջնային ուղղություններից է հանդիսանում ընդհանուր հանցավորության ապագա համարվող անչափահասների հանցավորությունը, իսկ խմբային հանցավորությունը նրա առանձնահատկություններից է և բավականին տարածված անչափահասների շրջանում: Այդ համատեքստում կարևորվում է անչափահասների խմբային հանցավորության բազմակողմանի և համալիր հետազոտությունը: Մինչդեռ, հայրենական կրիմինալոգիայում անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման վերաբերյալ համալիր և ամբողջական հետազոտություն չի իրականացվել: Այդ պատճառով չեն ուսումնասիրվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ անչափահասների խմբային հանցավորության առանձնահատկությունները, զարգացման միտումները, անչափահասների հանցավոր խմբերի տիպերը, խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի բնութագրիչ առանձնահատկությունները, անչափահասների խմբային հանցավորության պատճառներն ու պայմանները, հետևաբար՝ կանխարգելման հնարավորություններն ու հիմնական ուղղությունները: Վերոնշված հարցերի հետազոտման համար հեղինակն ուսումնասիրել և վերլուծության է ենթարկել 2004-2018թթ. ընթացքում անչափահասների հանցավորության վերաբերյալ վիճակագրական տվյալները, 2010-2017թթ. ընթացքում անչափահասների մասնակցությամբ խմբերի վերաբերյալ քննված 292 քրեական գործերի և դրանց կապակցությամբ կայացված դատավճիռների ուսումնասիրման, 2010-2017թթ. ընթացքում խմբի կազմում հանցանք կատարած 100 անչափահասների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների, 2013-2018թթ. ընթացքում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով 150 տեսուչների շրջանում իրականացված փորձագիտական հարցումների արդյունքները՝ հանգելով համապատասխան եզրակացությունների: Վերոգրյալով էլ պայմանավորված է անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնահարցերի համակողմանի և խորը ուսումնասիրության արդիականությունն ու կարևորությունը:

Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա

հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ուսումնական գործընթացում:

Ատենախոսությունում հեղինակը մանրամասնորեն ուսումնասիրության է ենթարկել վերաբերելի տեսական, օրենսդրական, տեղեկատվական նյութերը:

Ատենախոսությունը բաղկացած է երկու գլխից, որոնք ներառում են յոթ պարագրաֆ, որոնցում հեղինակը մանրամասն ու հանգամանորեն վերլուծում է վերոնշված հարցեր՝ առաջարկելով հնարավորինս համապարփակ լուծումներ:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի ճշտությունը, նպատակները, տեսական և գործնական խնդիրներին առաջարկվող լուծումները, ինչպես նաև հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը կասկած չեն հարուցում:

Գրախոսվող աշխատանքի գիտական նորույթն առաջին հերթին կայանում է նրանում, որ առաջին անգամ փորձ է կատարվել իրականացնելու ՀՀ-ում անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրների տեսական և գործնական բազմակողմանի և համընդգրկուն վերլուծություն՝ հայրենական և արտասահմանյան մի շարք երկրների տեսական աղբյուրների, հետազոտությունների, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ և ընդհանուր իրավասության դատարանների դատավճիռների, որոշումների ուսումնասիրության շնորհիվ:

Գիտական նորույթը պայմանավորված է նաև պաշտպանության ներկայացված դրույթներով: Դրանց մեծամասնությունն արժանի է առանձնակի ուշադրության, մասնավորապես՝ անչափահասների խմբային հանցավորության ոլորտում հանրորեն վտանգավոր արարքներ կատարած 10-18 տարեկան անձանց՝ որպես կրիմինալոգիական վերահսկողության օբյեկտ համարելը, անչափահասների հանցավոր խմբերի պրոֆիլակտիկ հաշվառման, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների արդյունավետ կիրառման նպատակով հատուկ դաստիարակչական կենտրոնի ստեղծման առաջարկները և այլն:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում տեղ գտած տեսական եզրահանգումները կարող են նպաստել հետազոտության թեմայի վերաբերյալ տեսական

պատկերացումների ընդլայմանը և հանդիսանալ տեսական աղբյուր՝ հետագա նմանատիպ աշխատանքների իրականացման համար: Բացի այդ, հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ոչ միայն անչափահասների խմբային, այլ անչափահասների ընդհանուր հանցավորության հակազդման քաղաքականությունը մշակելու գործընթացում, ինչպես նաև օգտակար լինել թեմային նվիրված ուսումնական դասընթացում:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշած խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած թվով ինը հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերոնշվածի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ատենախոսության առաջին գլխի առաջին պարագրաֆի շրջանակներում ատենախոսը հանգամանորեն վերլուծում և հիմնավորում է անչափահասների խմբային հանցավորության ոլորտում հանրորեն վտանգավոր արարքներ կատարած 10-18 տարեկան անձանց որպես կրիմինալոգիական վերահսկողության օբյեկտ: Սակայն, կարծում ենք, որ աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը քննարկեր քրեական պատասխանատվության տարիքի նվազագույն շեմն իջեցնելու հարցը:

2. Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆի շրջանակներում ատենախոսը հիմնավոր քննարկում և առաջարկում է, որ պրոֆիլակտիկ ներգործության արդյունավետության տեսանկյունից ոչ թե անհատապես անչափահասը, այլ հանցավոր խումբը պետք է վերցնել պրոֆիլակտիկ հաշվառման:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ ցանկալի կլիներ հեղինակը քննարկեր խմբերի հաշվառման վերցնելու մեխանիզմը:

3. Ատենախոսությունում հանդիպում են ոճաբանական և խմբագրական մասնակի թերացումներ:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և խորհրդատվական բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ Հռիփսիմե Միերի Խաչատրյանի կողմից հրատարակած հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության և թեման համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևաբար, Հռիփսիմե Միերի Խաչատրյանի «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ: Իսկ հետազոտության արդյունքները անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման համար ունեն կարևոր նշանակություն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հռիփսիմե Միերի Խաչատրյանի «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ. 00-05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի 2020թվականի ապրիլի 6-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ.Ստեփանյանը, Գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ.Սաֆարյանը, ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Խաչատրյանը, ավագ գիտաշխատողներ՝ իրավաբանական գիտությունների թեկնածուներ՝ Ա. Շուքուրյանը և Ա. Աբրահամյանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ.Ստեփանյանը